

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք զիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԱՅ 1883 ԹԻՒՆ

Կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրոգրամայով:

ՊՐՕԳՐԱՄԱ

I. ՏԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ: II. ԱՌԱՋՆՈՐԻՈՂ ՅՕԳՈՒՄՆԵՐ: III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: VI. ՀՆՈՒՄԳԻՐՆԵՐ: VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ֆելիետոն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ, գիտութեան ամեն ճիւղերից, թղթակցութիւններ: VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱԺԱՆՈՐԻՈՂՆԵՐ: Տարեկան 10 ռուբլ, վեց ամսուայ 6 ռուբլ, իւրաքանչիւր ամսուայ 1 ռուբլ: ՀԱՏՈՎ համարները 5 կոպէկ: ՀԱՍՅԷՆ. Тифлис, редакция «Мшак»:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Գիւղական ազգաբնակչութեան հոգի պակասութիւնը:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Գանձակից: Նամակ Բաղրից: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Խառնակ: Առաջին լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀՆՈՒՄԳԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Կարելի է արդեօք ճաշից յետոյ դասերով պարապել զգրոցում:

ԳԻՒԳԱԿԱՆ ԱՋԳԱՐԵԱԿՈՒԹԵԱՆ ՀՈՂԻ ՊԱՎԱՍՏՈՒԹԻՒՆԸ

„Кавказ“ լրագիրը իր № 312 մէջ նուիրում է մի առաջնորդող յօդուած Գուգիայի նահանգի մէջ գիւղական ազգաբնակչութեան հոգի պակասութեան հարցին: Յօդուածը շատ ուղիղ է նկատում որ հոգի պակասութիւն ունեցող գիւղական ազգաբնակչութիւնը կարելի էր գաղթեցնել զէպի նոր նուաճած Բաթումի նահանգը: Բաթումի նահանգի մէջ կան ազատ տե-

ղեր, բացի սրանից լրագիրը շատ իրաւացի է նկատում որ գաղթեցնելով վրացներին Գուգիայի նահանգի այն տեղերից, որտեղ հոգի պակասութիւն կայ զէպի Բաթումի նահանգը, վարչութիւնը միջոց կը առնայ ազգաբնակչութեանը համա ազատ հողեր ձեռք բերելու համար զանեկ այդ նահանգի մէջ իր համար մի ազգակից շրջան, քանի որ Բաթումի նահանգի բնիկ ազգաբնակչութիւնը ազգակից է Բաթումի և Լէնտուի գաւառներում բնակվող ազգաբնակչութեանը իր ծագումով լեզուով, բարբ ու վարքով: Ուրեմն գաղթածներին հեշտ կը լինի ընտեղանալ նոր երկրի կենսական պայմաններին:

Նոյն յարաբերութիւնների մէջ են գտնվում և Թիֆլիսի նահանգի Ախալցխայի ու Ախալքալաքի գաւառները և Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գաւառը: Այդ տեղերը գիւղական ազգաբնակչութիւնը սաստիկ բազմաթիւ հողի մեծ պակասութիւն

է զգում: Ուրեմն որքան ցանկալի է և յարմար է Գուգիայի նահանգից հող չունեցող գիւղական ազգաբնակչութեան Բաթումի նահանգ գաղթելը, նոյնքան ցանկալի է Ախալցխայի, Ախալքալաքի և Ալեքսանդրապոլի գաւառներից հող չունեցող գիւղացիների զէպի Ղարաի նահանգ գաղթեցնելը: Ինչ որ տեղ է „Кавказ“ լրագիրը Գուգիայի նահանգից գաղթեցնելու մասին, թէ նրանց յարմար կը լինի գաղթել Բաթումի նահանգը, նոյնը կարող ենք մենք ամեն իրաւամբ ասել և Ախալքալաքի, Ախալցխայի և Ալեքսանդրապոլի գաւառների անհող գիւղական ազգաբնակչութեան մասին: Եթէ նրանց գաղթեցնելու Ղարաի նահանգի ազատ տեղերը, նրանց համար շատ հեշտ կը լինէր յարմարվել այդ նահանգի մէջ կենսական ամեն պայմաններին, թէ այն պատճառով որ այդտեղ կլիման էլ նրանց համար յարմար է և թէ նոյնպէս Ղարաի նահանգում մի ազգակից շրջան, քանի որ Ղարաի նահանգի բնիկ ազգաբնակչութիւնը ազգակից է նրանց թէ իր ծագումով, թէ լեզուով, և թէ բարբ ու վարքով:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Նոյեմբերի 19-ին

Գանձակի հայոց երկսեռ զարոյցների հողաբաժնուների և ուսուցիչների մէջ մեծ անբաւականութիւններ յայտնվեցան և այդ պատճառով շատ հայեր վերջերս սկսեցին հանել իրանց գաւառներին ուսուցման հարցում: Նորերում եկաւ Թիֆլիսից երկար ժամանակ ապաստած հիւրը,—պ. Բաբիտաբեկ: Գեո ևս քաղաքում լսվում են զանազան խօսակցութիւններ. ժողովուրդը աշխատում է սեպտեմբերի առջև այս կամ այն անձին: Նահապետական Գանձակի հայ ազգաբնակչու-

րը կը վերանայ և կը փոխվի շնորհակալութիւնների, որովհետեւ աշակերտները, որոնց մէջ և չարերը, ստիպված կը լինեն տանը նստել և աշխատել իսկ աշխատանքը—բազմաբնակչութիւն է հողը համար ամեն հասկում և սիրտը ազնւացնող միջոցներից մեծն է: Աշակերտը պարագայ է, քանի որ գիտէ, որ միւս օրը ուսուցիչը հայել պէտք է պահանջէ իր դործանելութեան, նա չէ կարող թափառել և անկարգութիւններ գործել քանի որ նա զբաղված է, նա էլ ժամանակ չունի չարութիւնների համար:—Տընային ժամերի կանոնադրելը, բացի նոյն իսկ ուսման յառաջադիմութեան և այդ չարիքից ազատելուց, մի և նոյն ժամանակ մի մեծ և բարոյական միջոցաւորութիւն է ծնողներին համար:—Գործվողութիւնը, տեսնելով իր երեխային՝ սեղանի կամ պատճառի առաջը նստած՝ դրբերը, տեսնելով իր ընտանիքը, գրեթէ, կարգավոր, աշխատելով, ծնողական սիրտը մի առանձին հպարտութիւնով լցված, պարծենում է իր զբաղման և բարեկամ առաջ, որ իր Արշակը կամ Հեղինէն ամբողջ օրը պարագայ է գործում:—

Այժմ ես, մի ուրիշ, աւելի զօրեղ հիմքով, կը ցոյց տամ, որ ճաշից յետոյ դասերով պարապելը ոչ միայն աւելորդ է, այլ և միանգամայն վնասակար:

Ձեզ յայտնի պէտք է լինի, որ մանկավարժութեան ամենամեծ պահանջը և զարոյցի վերջնա-

թիւնը կարելի է բաժանել երեք մասի վրա, չը հաշւած ամբողջ, որ զեռ խոր տղիտութեան մէջ է մտնում: Առաջին մասը կարգում են հին և նոր ծառայողները արքունական գիւնդներում, երկրորդը՝ վաճառականները և դրանց հետ միասին հողերակալները և վերջապէս երրորդը՝ ինտելիգենցիան, որը բարեկամ է զարգացման զանազան կետերում կանգնած անձինքներից: Սրանց մէջ, ի հարկէ, կան շատ շահասեր և ետական մարդիկ: Գրա հետ՝ եթէ աչքի առաջ ունենանք հայերի բնական վատ յատկութիւններից մէկը,—անմիաբանութիւնը, կարելի է մի պարզ կարծիք ունենալ մեր ժողովրդի վրա:

Ենթոյն բարեկամ անձանց մէկ քանի տարի սրանից առաջ Գանձակում բացվեց հայոց երկսեռ դպրոց, որից առաջին տարում շատ ծնողներ փախչում էին, իբրեւ մի վտանգաւոր հիմնարկութիւն: Մէկը միւսին տեսնելով կամաց կամաց հասկացան ուսման օգուտները և սկսեցին սովորեցնել իրենց որդիներին: Ուղիղն ասել պ. Եպիսկոպոսեանի տեսչութեան ժամանակը մեծ յոյսեր կային դպրոցի վրա: Ինչպէս տեսուչը, այնպէս էլ ուսուցիչների մեծ մասը արժանաւոր երիտասարդներ էին և վառված սրտով աշխատում էին պատանիների զարգացման վրա: Բայց ինչ արած որ հողաբաժնուները ընտրված էին Գանձակի այն պարսիկներից, որոնք միշտ անմիաբան են միմեանց մէջ: Այս պարսիկները սկսեցին նոր կանոններ սահմանել ուսուցման համար, ուսուցչուհիներ և ուսուցիչներ հրաւիրել օտար քաղաքներից: Բայց առաջ, այնպէս անելուց յետոյ, այժմ մեր Գանձակից տեսնում են իրանց սխալը, հասկանում են որ իրանց արժանաւոր մանկավարժները փոխելուց յետոյ չեն կարող յետ դարձնել այն մեծ կորուստը, որից զրկվեցին մեր խեղճ մանուկները:

Վերջապէս մէկ Գանձակից երիտասարդ ուսուցչութիւն է անում նոյն դպրոցում: Սորան զանազան անկանոններ տալով, ասում են, սեպտեմբերի պ. Բաբիտաբեկի մօտ: Բայց ամօթ չէ այն մարդկանց համար, որոնք չեն իմանում միմեանց անգամ բարոյական ու թիւն բարբ: Ամեն մէկ արդարութիւն պաշտպանող մարդ պէտք է ասէ, որ ուսուցիչ Մ. Մնացականեանը աւելի հըմուտ է իր առարկայում, քան թէ ուսուցիչ Ա. Մատիւնեանը, բայց ինչու համար պէտք է մերերին ասել, իսկ օտարներին սիրել: Կարելի է արդեօք համեմատութիւն անել պ. Ա. Ս. Օսանի-

կան նշանակութիւնը է և պէտք է լինի աշակերտի ինքնագործ ունեւորութիւնը, ինքնաշխատութիւնը, ինքնուրոյն ունեւորութիւնը և ինքնակրթութիւնը, բայց այստեղ ևս արդէն հանդիպեցին մի այնպիսի խնդրի, որը ամենից մօտիկն է իմ սրտին և որը իմ հաստատ համոզմունքով ամենամեծ և ամենակարեւոր դրաւեցնող խնդիրը պէտք է լինի մեր մանկավարժական օրագրութեան բաժնում:

Ես կարծում եմ, որ ամեն մի զարոյցի ճակատին, որպէս ցուցանակ փորագրված պէտք է լինեն մեծ մեծ և խոշոր տառերով—Ինքնագործ ունեւորութիւնը, ինքնաշխատութիւնը, ինքնակրթութիւնը: Բայց այս մի ծանրակշիւ և էական խնդիր է, որը կարօտ է երկար խօսակցութեան և մշակելու, ես այստեղ ստիպված եմ հարցից շատ չը չեղելու: Համար միայն կարճ ակնարկութիւն անել այդ խնդրի վրա և ցոյց տալ սրա անմիջական կապը ինձ զբաղեցնող հարցի հետ: Բաւական եմ համարում այստեղ միայն այսքան ասել, որ ինքնագործութիւնը ընթացիկ, բնատուր յատկանիշն է մանուկի և նրա զարգացման զիջաւոր ֆակտորն է: Այս բանը ընտրված միայն լաւ հասկացաւ: Քրեքերը իր սօր աչքերով զննելով և ուսումնասիրելով մանկան հոգին, բնականութիւնը և հենց մանկան այդ ընթացիկ ընդունակութեան և ձգտման (զործելու և ստեղծագործելու) վրա հիմնելով իր մանկական պարզեղը և

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՐԵԼԻՆԻ ԱՐԳԵՕՔ ՃԱՇԻՑ ՅԵՏՈՅ ԳԱՍԵՐՈՎ ՊԱՐԱՊԵԼ ԳՊՐՈՑՈՒՄ

(Կարգադրել է ընդհանուր հայ ուսուցչական ժողովում սեպտ. 2-ին, 1882 թ.):

Ընդհանուր ուսուցչական ժողովին դրաւեցնող խնդիրներից մէկն էլ վերոյիշեալ հարցն էր, որի մասին զեկուցումն կազմելը և ժողովի բնութեանը ներկայացնելը ինձ յանձնվեցաւ: Լրագիրներից յայտնի կը լինի ընթերցողների, որ ընդհանուր վիճարանութիւնից և քուէարկութիւնից յետոյ ժողովը, բացի 3 անձից, միանգամայն համաձայն գտնվեցաւ զեկուցման հետ: Որովհետեւ խնդիրը շատ կարեւոր համարվեաւ և զանազան ժամանակներում զանազան տեղ վիճարանութեանց առարկայ է դարձած, վստիստը եւ օգտակար եմ համարում ծանօթացնել ընթերցողներին այն հին մօտեցման հետ, որոնցով եւ ոչ միայն աւելորդ, այլ միանգամայն վնասակար եմ համարում այդպիսի պարագայում:—Նախ՝ տեսնելով թէ արդեօք այդպիսի ձեռք պահանջ է ծնողների կողմից, թէ ոչ:—Մանաւանդ քաղաքներում, ճաշից յետոյ դասեր ցանկացողները զիջաւորապէս այն ծնողներին մեծաւ, և դուք կը տեսնէք, որ բոլոր արտօնջնե-

Ջադիմութիւնը, և նրա շնորհիւ իտալական գահի շուրջը կարող են հասնել պետութեան ամենալաւ գործիչները:

Խօսելով ընտրողական վերանորոգութեան մասին, թագաւորը նկատում է. «Այդ երեւելի վերանորոգութիւնը, որ պատրաստված էր իմ փառաւոր ծնողից և որ ես անցկացրի իմ տուած խոստմունքի համեմատ, մեզ համոզում է, որ իտալական ժողովուրդը հասունացել է ազատութեան համար, և պարտականութիւն է դնում մեզ վրա մինչև վերջը շարունակել խաղաղ յաղթութիւնները, որոնց օգնութեամբ մենք կը հասնենք կատարելով մեծութեան և որոնց շնորհիւ կը ստանանք ամբողջ քաղաքակրթւած աշխարհի յարգանքը»:

«Ես կարծում եմ, շարունակում է թագաւորը, որ կարճ միջոցում քաղաքական անկարգութիւնները վերջ կը դնվի և դուք պատմաւորները կը կարողանաք նուիրել բոլոր ձեր ժամանակը պետութեան վարչական հիմնարկութիւնների բարեօրոգմանը:

Այսուհետեւ խօսելով իտալացի բարեկամական յարաբերութիւնների մասին միւս պետութիւնների հետ, իտալական զիպլոմատիայի ջանքերի մասին պետութեան շահերը Եւրոպայի շահերի հետ ներդաշնակելու համար, թագաւորը ասեց. «Իսկ մենք մեր կողմից կը նպաստենք իտալական ժողովրդի խաղաղ զարգացմանը և նոր իտալացի մեծութեանը»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Փարիզից հեռագրում են նոյեմբերի 18-ին: Լրագիրները շարունակում են իրանց անբաւականութիւնը յայտնել Անգլիայի դէմ Մաղադակարի առիթով: Լորդ Գրէնիլլ պատասխանելով ֆրանսիական կառավարութեան հարցմունքին, խնդրում է Գրէնիլլին չը շտապել և սկզբից ուսումնասիրել հարցը:

—Հռոմից հեռագրում են նոյեմբերի 18-ին: Ռուսաց արտաքին գործերի մինիստր պ. Գլիսա այսօր այցելեց իտալական արտաքին գործերի մինիստրին:

—«Neue freie Presse» լրագիրի Լոնդոնի թղթ-թակիցը հաղորդում է, որ, երբեք, Գիւֆէրին խորհուրդ տուեց բոլորովին վերջ տալ Արաբի-փաշայի դատին, որովհետեւ չէ կարելի ապացուցանել նրա զորքած յանցանքը: Լորդ Գիւֆէրին խնդրում է առանց եռանդի, չնչին և անխելք մարդ:

—Լոնդոնից հեռագրում են նոյեմբերի 18-ին, որ պ. պ. Բու և Բիւքէ, որոնք Մաղադակարի

գործերի վերաբերութեամբ հիւպատոսներ են փախուցել և Մարսէլում, հրաժարական տուին: Լորդ Գրէնիլլ վաղը կընդունի Մաղադակարի դեսպաններին:

—Լոնդոնից հեռագրում են նոյեմբերի 18-ին: Պարլամենտում, Տրէվիլիան, Խլանդիայի գործերի մինիստրը յայտնեց, որ Խլանդիան անհնար է խաղաղացնել, մինչև որ զրոյուղ ճառերի հրապարակագէտ արտասանել անպատիժ կը մնայ, և այդ պատճառով, այժման հանգամանքները աչքի առաջ ունենալով, կառավարութիւնը վրձնեց դատի կանչել պ. Բէրմոնդին, որ պարլամենտի անդամ է Նիւթոնից, նրա նորերումս արտասանած ճառի համար, և պարլամենտի անդամ պ. Գլիլին:

—Լոնդոնից հեռագրում են նոյեմբերի 19-ին: Կայիլից ստացվող հեռագիրները հաղորդում են, որ Արաբին համաձայնեց իրան մղաւոր ճանաչել ապստամբութիւնը զրոյուղ մէջ: Եգիպտական կառավարութիւնն էլ, իր կողմից, հրաժարվում է մեղադրել նրան Ալէքսանդրիայի սպանութիւնների և հրկիզութեանց մէջ: Արաբին կը դատաւարարի մշտական աքսորի, պահպանելով սուրբ, աստիճանը և ուսմանը:

—Փարիզից հեռագրում են նոյեմբերի 19-ին: Հանրապետութեան նախագահ Գրէլի ընդունեց այսօր Գանիայի թագաւորն Վուլան և ինքն ևս այցելութեան դնաց նրա մօտ: Մաղիդի նախկին ֆրանսիական դեսպան Անդրէի այսօր մենամարտեց Ալէքսի և Լորանի հետ, «Paris Journal»-ի խմբագիրների հետ:

—Փարիզից հեռագրում են նոյեմբերի 19-ին: Գէլարոյ Վէրնէ, արտաքին գործերի մինիստրը, այսօր առաւօտ յանդարձակի վախճանվեցաւ: Նա նոյն պաշտօնն ունէր Ֆրէյսինէի մինիստրութեան մէջ և մեծ յարգանք էր վայելում: Լորանը մենամարտի ժամանակ վերջ ստացաւ աչքի տակ վերքը բաւական վտանգաւոր է, երկրորդ մենամարտը, որ պիտի կայանար Անդրէի և «Paris Journal» լրագրի խմբագիր Ալէքսի մէջ, մինչև վաղը է յետաձգված: Այդ մենամարտի պատճառը հետեւեալն է. Անդրէի դեսպան էր Մաղիդիում և պաշտօնական ծանուցումից մի քանի օր առաջ նա կրում էր Պատուաւոր Լէգէօնի չքանչաւը, այդ բանը հրատարակեցին վերոյիշեալ խմբագիրները, որ և եղաւ պատճառ նրանց կռիւի:

—Բերլինից հեռագրում են նոյեմբերի 19-ին: Հաւատարմութեամբ են, որ աստորական և գերմանական կայսրների մէջ զրաւոր դաշնագիր կայ դաշնակցութեան մասին:

—Լրագիրներին հեռագրում են: Գերմանական կառավարութիւնը պատասխանեց ֆրանսիական կառավարութեանը, որ Գերմանիան ոչինչ չաճեր չունի Մաղադակարում:

—Հռոմից հեռագրում են նոյեմբերի 19-ին: Ռուսաց ղեկավարը այսօր ի պատիւ Գլիսի ճաշ տուեց, որ ներկայ էին բոլոր դեսպանները: Մանչինի հիւանդութեան պատճառով չը կարողացաւ ներկայ լինել ճաշին:

—Լրագիրներին հաղորդում են, որ Գամբետտա-

յի առողջութիւնը լաւանում է, և հինգշաբթի, նոյեմբերի 18-ին նա կը նախագահի զորքը վերահաղմող յանձնաժողովին:

—Բերլինից հաղորդում են նոյեմբերի 27-ից, որ նախկին մինիստր-նախագահ Բարոն Ուտտֆոն-Մանտէֆէլ վախճանվեցաւ:

—«Kavkaz» լրագրի մէջ տպւած է. Պօլսից գրված թղթակցութիւնից, արտաստում ենք բառ առ բառ հետեւեալ կտորը: «Ես ձեզ հաղորդում էի բարեկամական զգացումների մասին, որոնք հաստատուեցան հայոց հասարակութեան և թիւրք կառավարութեան մէջ, այն պատճառով, որ Սալիդ-փաշան մտցրեց իր պրօգրամայի մէջ Արմենիայում մտցնելի բէֆօրմները: Սալիդ ձեռնամուխ եղաւ հայոց բէֆօրմներին այն ժամանակ, երբ անգլիացիները, բաղդի կամքին յանձնելով Արմենիայի վիճակը և ժանդարմերին, որ պէտք է պաշտպանէր աշխատանքը հայ երկրագործներին քիւրդերի դէմ, յետ կանչեցին դէպի Եգիպտոս Բէկէր-փաշային և անգլիացի ուրիշ ֆիցէրներին, որոնք պէտք է կազմէին նոր պահպան ուժ Արմենիայում: Այժմ անգլիացիները հայոց միացան Սալիդ-փաշայի բարեկամների կուսակցութեան հետ, որ բէֆօրմներ ինքիցիստիք սպասում է Բ. Գրան կողմից, կամ աւելի ճիշդն ասած, Սալիդ-փաշայից, այնպէս որ պատրիարքի խորհրդարանի մէջ այժմ մեծամասնութիւնը բաղկացած է Բ. Գրան կուսակցիցներից: Թիւրքաւերները, որպէս զի հաճելի լինեն Սալիդ փաշային, որի համակրութիւնը դէպի հայոց ազգը նրանք շատ են դնաւորում, վճռեցին ընտրել, նախ որպէս կանդիդատ և ապա որպէս պատրիարք, մի մարդուն, որ անձնապէս հաճելի է Սալիդին և հաւատարմի թիւրքներին: Ընտրվողը Սալիդ-փաշայի անձնական արքեպիսկոս, հայր Բարթոլոմէոսն է, որ եպիսկոպոս էր Բրուսայում, որտեղ երկու տարի առաջ Սալիդ զլխաւոր նահանգապետ էր: Հայր Բարթոլոմէոս ծանօթ չէ ոչ ևւրօպական լեզուներին, ոչ էլ ևւրօպական հայեացքների հետ: Նա մի հին թիւրք է, քրիստոնէական վարդապետութեանը պատկանող: Նա աշակերտ է Էջմիածնի այժմեան Գեորգ կաթողիկոսի, որի կաթողիկոսական աթոռի վրա նստելուց յետոյ, Բարթոլոմէոս զրաւեց նրա տեղը Բրուսայում: Տաւ տարի շարունակ Բարթոլոմէոսն սխտեմական կերպով ընդդիմադրում էր նորերումս պատրիարքութիւնից հրաժարական տուած Նիւթէսի հակաթիւրքական քաղաքականութեանը»:

—Փարիզից հեռագրում են նոյեմբերի 18-ին: Մի քանի լրագիրների հաղորդած լուրը այն բանի մասին, որ իբր թէ Գամբետտա վիրաւորված էր կնիջ հետ ունեցած կռիւ ժամանակ, հնարված է: Գամբետտայի առողջութիւնը կազդուրվում է, «Gaulois» լրագիրը տպեց տիկին Ալանի հետ խօսակցութիւնը, որը առում, թէ իր անհամաձայնութիւնը Գամբետտայի հետ սկսվեցաւ այն ժամանակից, երբ «Nouvelle Revue» ամսագիրը սկսեց ցուցակներով ընտրութեան դէմ գրել: Գամբետտայի տղատամբութիւնը, տիկին Ալանի խօսքերով, կեղծ է. նա փառասեր է: Նիքէ Զրան-

սիական հանրապետութեան նախագահի տեղը ազատ մնայ, այն ժամանակ երկու կանդիդատներ միայն հնարաւոր են՝ Բրիսսոն և Շանդի, մանաւանդ զենեւրալ Շանդի, որին արտասանմանում յարգում են:

—Հեռագիրը արդէն հաղորդեց լրագիրներին, որ հրատարակվեցաւ իշխան Ժեռոմ-Նապօլէօնի, Նապօլէօն III-ի եղբորորդու նամակը: Այդ նամակը տպված էր «Figaro» լրագրում և պատասխան էր Դուքս դը-Բրօլլի յօդուածին, որ տպված էր «Correspondent» լրագրի մէջ: Բրօլլի պախարակում է իշխանին այն բանի մէջ, որ նա ամեն միջոցներով աշխատում էր դէմ դնել Նապօլէօն III-ի դիտաւորութեանը պատերազմ յայտնել Պրուսիային իսկոյն Սաղովայի մօտ աւստրիացիներին յաղթելուց յետոյ: Բրօլլի մի և նոյն ժամանակ պնդում է, որ իշխան Նապօլէօն, իր անձնական կայսրով (ինչպէս յայտնի է, իշխանը պատկւած է Կլօտիլդայի, իտալական թագաւոր Վիկտոր-Էմանուէլի աղջկայ, և այժմեան թագաւոր Հուրբերտի քրոջ հետ), աւելի իտալացի է, քան ֆրանսիացի: Իշխան Նապօլէօն «Figaro» լրագրում տպված վերոյիշեալ յօդուածում պատասխանում է, որ ինքն երբէք մեծ ազդեցութիւն չէ ունեցել Նապօլէօն կայսրի վրա, և որ ինքն անձամբ երբէք պատերազմ չէր ցանկացել Պրուսիայի հետ, ոչ 1866 թվին, ոչ 1870 թվին, 1866 թվին ֆրանսիական զօրքի վերաբերութեամբ այդպիսի պէսիմիստական հայացք ունենալու հետ միասին, ինքն, այնու ամենայնիւ, ֆրանցիացի էր մնում և ապագան կը ցոյց տայ, թէ ում քաղաքականութիւնը աւելի հայրենասիրական է—Իրանը, թէ դուքս Բրօլլին:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կալակուա I-ի թագաւորութիւնը: Սանդիլիան կղզիների թագաւորը, անցեալ տարի Ամերիկա և Եւրօպա ճանապարհորդելով, այդ երկրներից այն տպաւորութիւնը դուրս բերեց, որ թագաւորութիւնը ամեն տեղ մեծ հանդիմով է կատարվում, այդ պատճառով նա էլ ցանկացաւ դարեց յետ չը մնալ և վճռեց թագաւորվել: Հանդէսը եկող տարվայ փետրվարի 12-ին կը կատարվի:

Գարբուալդի աշրին Ֆարինի մօտ: Այս օրերս Գարբուալդի այրին, սինիօրա Ֆրանչէսկա, տեսակցեց իտալական պատգամաւորների ժողովի նախագահ Ֆարինիի հետ. վերջինը շատ սիրով ընդունեց նրան և խոստացաւ նրան իր հովանաւորութիւնը, բայց մի և նոյն ժամանակ

Բացի վերոյիշեալ պատճառներից վրին ճաշի դասերը ունեն և գործնական մեծ անյարմարութիւնները, մանաւանդ մեր կեանքի վերաբերութեամբ: Մեր քաղաքային և վերջական դպրոցներին աճադին մեծամասնութիւնը խելոք և աղքատ դասակարգի որդիք են, նորա տանը իրանց ծնողների համար օգնող ձեռքեր են: Նորա բացի դասական պարագլուխներից ստիպված են օգնել և մասնակցել իրանց ծնողների աշխատանքին: Զգին ճաշի դասերը խելով ծնողներից այդ օգնող ձեռքերը, պատճառ են դառնում ծնողներին շուտով դպրոցից հանելու: *) և այդպիսով նոյա ստացած ուսումը լինում է թերի և մեծ մասամբ անշահաւետ կեանքի մէջ:—Վերջապէս աւելացրէք սորա վրա և այն գործնական անյարմարութիւնները, որ երեխաները ծակ կօշիկներով աշխատային ցիկներին և ձմեռնային ցրտերին ու ձիւնին, օրէնք երկու անգամ պէտք է դպրոց երթնէին, մանաւանդ շատ տեղեր հեռաւոր տեղերից:—Նոյա, որոնք առողջապահական դժուարութիւններ են նկատում շարունակ 4 կամ 5 ժամ առաւօտը միայն դաստանը նստելը—են

պատասխանում եմ զորանց այսպէս. առաջին պատրաստականի երեխաները օրական շատ շատ միայն 4 ժամ կարող են դասեր ունենալ դպրոցում, դասամբ 2 օր և 2 օր, որոնց մեծ դասամբ 1/2 ժամ պէտք է լինի. զորանք առաջին ժամերը թող պարապեն աւելի ծանր աւարկանքով, իսկ վերջին ժամերը աւելի թեթեւ դասերով, օրինակ ձեռագործով, զծաղրութեան և վայելագործութեան դասերով: Կարծում եմ, որ մեր դպրոցների մեծագոյն մասը այսպէս էլ ունի բաժանած դասերի պարագլուխները: Իսկ միւս դասատան աշակերտները, որ աւելի ֆիզիկական ուժեղ են, մի և նոյն դասերի բաժանման ձեռով և դասամբ շոցներով, ոչինչ հակաառողջապահական արգելքների չեն հանդիպիլ:—Բայց մենք մինչև այժմ խօսեցինք այն անյարմարութիւնների վրա, որոնք աշակերտներին և նրանց օրվա դասերը պէտք է պատրաստել, ծնողների հետ տեսակցել, նորանք լաւացնել և նորանց մասնաւոր խնդիրները, կատարել, նա պէտք է թղթակցել օրագիրներին, որի համար նա պէտք է բազմակողմանի նիւթեր հաւաքէ, մանաւանդ տեղական կեանքից որոշեալ պրօգրամայով *), նա պէտք է անպատճառ հետաքրքրվի և մասնակցել տեղական հասարակական գործերին և առհասարակ ճաշերից յետոյ

նայ, այնու ամենայնիւ շատ բան չէ կարող չինել: Ուսուցչի բարոյական և նիւթական վիճակի համար մի խօսք չաւող աւերախտները—միայն անթիւ պարտականութիւններ բարձելով ուսուցչի վրա, կարծում են, որ նա մարդ չէ, այլ գերբնական արարած է: Ուսուցչիները իրանց ծանր և սրտամաշ պարագլուխները աւարտելուց յետոյ, կարծում են, որ պէտք է ուտեն իրանց օրհնեալ հացը և մի փոքր հանգստանան ու ֆիզիկապէս կազդուրվեն, թարմանան. այնուհետև ուսուցչիը հաղար ու մի գործեր ունի կատարել համար. նա ամենից առաջ պէտք է հօգայ իր գլխի հետ, նա ամենից առաջ պէտք է հօգայ իր գլխի հետ, ընթացիկ և հարկաւոր լրագիրները և զրքերը պէտք է կարգաւ, միւս օրվա դասերը պէտք է պատրաստել, ծնողների հետ տեսակցել, նորանք լաւացնել և նորանց մասնաւոր խնդիրները, կատարել, նա պէտք է թղթակցել օրագիրներին, որի համար նա պէտք է բազմակողմանի նիւթեր հաւաքէ, մանաւանդ տեղական կեանքից որոշեալ պրօգրամայով *), նա պէտք է անպատճառ հետաքրքրվի և մասնակցել տեղական հասարակական գործերին և առհասարակ ճաշերից յետոյ

մեր ուսուցչիները պարագլուխները պէտք է մի տեսակ հանգիստ և աւելի թեթեւ ձեռք ունենան. չը մոռանանք, որ եթէ նա բաղդաւորութիւն ունի ընտանիքի տեղ դառնալ, որոյն համար էլ որոշեալ հոգսեր ունի, որի համար որոշեալ ժամանակ է հարկաւոր: Բացի դրանից, ճաշելուց յետոյ, մարդուս միտքը տրամադրվի է, հակված է դէպի քուսնը, հանգիստը, դուքս մի ժամ և հէնց այն ժամանակ, երբ նա պէտք է պարապէ. իսկ եթէ դուք կառնք, որ առաւօտը դասերով պարագլուխ ուսուցչի տեղ, ճաշից յետոյ մի այլ ուսուցչի պէտք է պարապել, այն ժամանակ ես կը պատասխանեմ այդ կէտին, որ մեր դպրոցներն էլ կրկնապատկի նիւթական միջոցներ պէտք է ունենան երկու ուսուցչի պահելու, այն ինչ մեր բազմաշաբաթ ուսուցչիները, չը նայելով իրանց ծանր և փշոտ աշխատանքին, տեղում են նիւթական ողորմելի վիճակի մէջ և հիւսնադու թեան կամ ծերութեան հասակում՝ անհասարակութիւնը վիշապի պէս բերանը բաց արած՝ կանգնած է նոյա դրանը:

Վերոյիշեալ բոլոր առաջ բերած հիմքերի վրա, ես յօդուածիս ճակատում դրած հարցին, պատասխանում եմ, ճաշից յետոյ դասերով պարագլուխ—միանգամայն անգործնական և անկարգ է:

*) «Մշակի» անցեալ տարվայ համարներից մեկում ես պատիւ ունեցայ ցոյց տալ թրուանդաներով, որ միայն Նիւթ. դպրոցի 300 աշակերտներից 200-ը թողնում են դպրոցը, ստորին դաստաններից սկսած՝ չքաղաքական պատճառով:

*) Ցանկալի էր որ «Մշակի» խմբագրութիւնը, որ առաջ հրատարակէր մի մանրամասն և բազմակողմանի ծրագիր, որի ամաչադարձութեամբ շատ բան կարող են չինել մեր թղթակցիները: Մ. Հ.

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор-Мелик, ул. каз. д.